



մանեան, մի Արուսեան, մի Ալեքանդրեան շատ աւելի մեծ անուն ունեն և շատ բաւ են յայտնի, քան թէ իզմիրեանը:

Եւ ահա միշտ դուրս լինելով պատասխան առ ու պաշտօններէն, միշտ լինելով ոչ թէ գործողի, այլ միայն կրիտիկոսի դերում, նստած Կ. Պօլսի մէջ, իզմիրեան հայ հասարակութեան գէթ մի շրջանում ստացել է խիստ հասկացող, կամքի տէր և հեռատես հոգեւորականի անուն: Ահա այդ էր պատճառը, որ այդ եպիսկոպոսը, որին նոյն իսկ թիւրքաց չայտատանում շատ քիչ են ճանաչում, այստեղ, Կովկասում՝ 1892 թ.ին հանդէս եկաւ իբր կաթողիկոսական երկրորդ թիկնաժողով:

Աստուած տայ, որ այդ եկեղեցիները ճիշդ լինին: Ամենից առաջ և ամենից շատ մենք ուրախ կը լինենք: Մեր հոգեւորականութեան մէջ այժմ այնքան քիչ են օրինաւոր, ազնիւ, հասկացող, խելքը զինն մարդիկ, իսկ Կ. Պօլսում արժանաւոր հոգեւորականների մի այնպիսի սով է, որ վերին աստիճանի ուրախակի կը լինի, եթէ յիշատի իզմիրեան, այդ բարոյական և մտաւոր անապատի մէջ յայտնվի իբրեւ մի չը ճանաչված, մի չը գնահատված օտարի:

Եւ ահա, ամենալաւ առիթ է ներկայանում այդ մարդուն ցոյց տալու իր ոյժը, իր ընդունակութիւնը, և միանգամից դրաւելու ազգի ուշադրութիւնը և համակրանքը: Կ. Պօլսի պատրիարքի պաշտօնը գուցէ երբեք այնքան փափուկ պայմանների մէջ չէր գտնվում, որքան այժմ: Մի քանի ամիսը արդէն բաւական է, որ պատրիարքը կամ ժողովրդի պաշտօնին դառնայ, կամ զորովի իր նախորդների նման, անկարող լինելով կատարել իր պարտքը, անկարող լինելով բաւարարել իսկ տալ ներկայ պահանջներին:

Իսկ թէ ինչ է այդ պարտքը, և որոնք են այդ պահանջները, այդ մասին կը խօսենք միւս անգամ:

ՄԱՍՏՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ ԹԻՒՐԿԱՅ ՀԱՅՏԵՐԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Անգլիական «Morning Post» լրագիրը ուշադրութիւն է դարձնում այն հանգամանքին վրայ, որ երեքպիսեան զանազանութեան պետութիւնների ներկայացուցիչներէն ոչ մէկը չէ մասնակցում թիւրքաց քննիչ յանձնաժողովի մէջ և կենտրոնական վարչապետի պետութիւնների մի այգպիսի վարմունքի բացատրութիւնն է պահանջում: Եթէ ինքաւ պետութիւնների մէջ

եւ իրաւի, կը գայ ժամանակ և զուցէ շատ շուտով, որ այդ վիճը կը վերանայ և մեր լեզուներն էլ կը միանան: Այնուհետեւ մենք միակերպ կը մտածենք, միակերպ կը գրենք և միակերպ էլ կը խօսենք:

Այնուհետեւ մեր լեզուն աւելի կը ճոխանայ, աւելի կը ծաղկի և կը զօրանայ: Գուրս կը զանայնպիսի տաղանդներ, որոնց միայն կարագիտեն ենք մենք այսօր: Բայց օր առաջ երևակայել, թէ որպիսի լեզու կը լինի այդ, որքան ճոխ և գեղեցիկ, որքան ներգայնակ և կանոնաւոր, և սկսել այդպիսի մի չենք կատուցանելու փորձ անել, այդ առնուազան խնդրարութիւնն է, որովհետեւ ընդդէմ է լեզուի զարգացման օրէնքներին:

III

Եւրոպական լուսաւորութեան հոսանքը դէպի մեզ՝ առիթ դարձաւ մեր նոր գրական լեզուի ծաղկելուն, իսկ հաղորդակցութեան դիւրութիւնը այդ լեզուն տարածեց մեր բոլոր խաւար խորշերում: Այժմ միայն գրաբանը դուրս մղվեց գրական ասպարէզից, այլ և բարբառները կորցրին իրանց նշանակութիւնը, տեղի տալով գրական լեզուին:

Թիֆլիսի բարբառը՝ ամենից շուտ դուրս մղվեց նոր սերնդի բերանից և մնաց միայն դառամած պառակտների բերանումը, միւս բարբառներն ևս քաղցրեցրեց դուրս մղվելին և պատասպարվեցին աննշան գիւղերում: Ուրեմն մեր ներկայ գրական լեզուի տիրապետութիւնն աշխարհ է, իբրեւ արդէն կատարված փաստ: Զատ չի անցնի, բարբառ առածը այլ ևս չի լինի:

Այս բանին մեծապէս կը նպաստէ և թարգմանված Աստուածաշունչը: Իժմանալին Աստուածաշունչը կարող է մուտք գտնել ամեն մի խոր-

համաձայնութիւն չէ կայացել, —ասում է լրագիրը, — և այդ պատճառով նրանք չեն ցանկանում իմանալ, թէ ինչպէս կը վարվի յանձնաժողովը, այն ժամանակ նրա ամբողջ գործունէութիւնը այն արդիւնքը միայն կունենայ, որ աւելի ևս որոշ կերպով երևան կը հանէ այն հակառակութիւնը, որ բաժանում է պետութիւններին: Իսկ Հայաստանի համար այդ բանը, ի հարկէ, միայն ամենալաւ հետեւանքն է կարող է ունենալ:

«Memorial Diplomatique» լրագիրն ասում է. «Բ. Գուրը յայտարարեց, որ ինքն ոչ միայն առաջարկեց պետութիւններին ամեն միջոցներ գործ դնել երևան հանելու ճշմարտութիւնը Սատուում և ճարտարիկում տեղի ունեցած անկարգութիւնների վերաբերմամբ, բայց և ջնքով կերպով ցանկանում է Եւրոպայի մասնակցութիւնը այն քննութեան մէջ, որը, երեւի, կը ձգձգվի ցուրտ ձմեռվայ պատճառով, որ ստորադաս է այդ տեղերում: Օրմանեան կառավարութիւնը անհրաժեշտ պայցոյցներ ունի այն ինտրիգների մասին, որոնց օգնութեամբ վաղուց պատրաստվում էր վերջին պատասխանութիւնը, երբ այդ պայցոյցները կը ներկայացվին յանձնաժողովին (կը մտանքն արդեօք այդ յանձնաժողովի մէջ բոլոր օտար հիւպատոսները, թէ նրանցից մի քանիսները), Եւրոպան և Ամերիկան առանց դժուարութեան կը համոզվեն, որ հայ ազդեցատուները անպայման մեղաւոր են և նրանք են, որ անդադար դրում են հայերին դէպի պատասխանութիւն»:

Գերմանական «Vossische Zeitung» լրագիրն Կ. Պօլսից գրում են. «Այստեղի քաղաքական շրջաններում միմեանց խիստ հակասող կարծիքներ են արտայայտվում: Բիթլիսի վիլայէթում կատարված դէպքերի անաչառ քննութիւնը հիւսիսային ամերիկական ընդհանուր-կոնսուլին յանձնելու մասին: Մինչդեռ ոմանք միանգամայն իրաւացի են գտնում այն միտքը, թէ Ամերիկայի հիւպատոսը անաչառ քննութիւն կատարելու ամենապարզ անձնաւորութիւնն է, որին նրանք ընդհակառակ են հաստատում: Այդ առիթով յիշեցնում են ամերիկական հիւպատոսի առաջին քարտուղար Նիքոլսի օտարտի քննութիւնը, որ նա նախընտաց տարում կատարել էր Մարտիանում: Այդ քաղաքագէտը այն աստիճանի երկարվեց թիւրքաց ազդեցութեանը, որ իր գեղուցման մէջ համակատարի համար նպատաւոր կարծիք յայտնեց, իսկ ամերիկական միաբնակների համար՝ ընդհակառակը: Զետեանքը այն եղաւ, որ նա զրկվեց իր պաշտօնից: Նրա թէ անձնաւորութիւնը և թէ

ճիթում: Ամենքը կը կարգան Աստուածաշունչը գիրքը, կընտելանան Պրա լեզուին, կը խօսեն նոյն լեզուով, կը գրեն նոյն լեզուով, նրա ամեն մի բառը և ամեն մի տառը կարգացող համար օրինակ կը լինի և անսխալ:

Պէտք է ասել՝ Աստուածաշունչը այդ նպատակի համար ոչ չէ թարգմանվում: Ի հարկէ, ոչ բայց ոչ կայ այնքան տխմար, որ չը լինի հասկանալիս, թէ սուրբ գիրքը ինչ լեզուով որ թարգմանվում է, նա սրբագործում է և նոյն լեզուն: Այդպէս է կրօնական աշխարհում ամեն տեղ և ամեն լեզուում: Կաթողիկոսական աշխարհում երկար ժամանակ թող չէր տրվում Աստուածաշունչը լատիներէնից թարգմանել միւս կաթողիկոսական լեզուով: Նոյն վիճակի մէջ է այսօր և Ղօրանը իսլամական աշխարհում: Մեր մէջ էլ գրաբանն էր համարվում սուրբ լեզու, իսկ աշխարհիկը նոր են ուղում օժիլ և սրբացնել...

Եւ Աստուածաշունչի վրա նայում եմ միայն լեզուի տեսակետից, բարոյական տեսակետը համարելով ինքն ըստ ինքեան հասկանալի: Եթէ Աստուածաշունչի վրա նայի սոսկ բարոյական տեսակետից, իսկ լեզուի տեսակետն արհամարհվի, այնուհետեւ թարգմանիչները կարող են լեզուի կանոնաւորութեան վրա ոչ մի ուշադրութիւն չը դարձնել, ինչպէս չեն դարձնում ոչ ընդհանրականները և ոչ կաթողիկոսները, որովհետեւ նրանց նպատակն այն չէ, որ մեզ ուղիղ հայերէն սովորեցնեն, այլ որ՝ կրօնական տեսակետից՝ իրանց ուղած ճանապարհով տանեն մեր թէկուզ զրա համար մեր լեզուն աղաւաղեն:

Եթէ Աստուածաշունչի թարգմանութեամբ պէտք

արած քննութիւնը ընդունվեց նրանով, որ նա թիւրքաց կառավարութիւնից պաշտօն լինելից, թէ և չը ստացաւ: Միակ եւրոպական անձնաւորութիւնը, որ Բիթլիսի ամերիկահայ դէպքերի ժամանակ անմիջապէս ներկայ էր, ուստի և ընդունակ էր աւելի ճիշդ վիլայութիւն տալու, քան Վանի անգլիական հիւպատոսը, որը միայն այն ժամանակ էր այնտեղ գնացել, երբ թիւրքաց զորքերի հրամանատար Մէհմեդ-Պաշայի փաշան արդէն «Խաղաղութիւն» վերականգնել էր, — դա սպանիացի ճանապարհորդ Նիլինէզն է: Այդ անձը շարունակ ութ ամիս ճանապարհորդում էր գիտնական նրա պատակով Անատոլիայում, թիւրքերի թողաւորութեամբ և առաջնորդութեամբ, և ուղիղ այն ժամանակ հասաւ Բիթլիսի, երբ ողբալի դէպքերը սկսվեցին: Նիլինէզը այժմ Կ. Պօլսի է և զբաղված իր ժողոված հարուստ նիւթերը մշակելով՝ մի մեծ ճանապարհորդական գրութեան համար: Թիւրքերը ամենապիկրակ աշխատում են նրան համոզել, որ անգլիական թիւրքերում մի ժխտողական յօդուած գրել, ապացուցանելով, որ իր ներկայութեան ժամանակ տեղի չեն ունեցել այնպիսի չարագործութիւններ, որոնցով ինքն անգլիական լրագիրները Նիլինէզը այդքան, ցոյնէ խօսք տալ իր տեսանքների մասին ոչ զրկել, ոչ խօսել: Նիլինէզը մինչև այսօր ոչ մի պարտաւարութիւն չէ ընդունել և յայտնել է մեծ վիզիլին, թէ անկարող է կատարել նրանց պահանջը, որովհետեւ զրանով կը մեղանէր ճշմարտութեան դէմ: Ոստիկանապետ Լազար-Փաշայի առաջարկութիւնը, որով առաջարկվել է լաւ վարձատրութեամբ պտտել Եւրոպայում, դասախօսութիւններ կարգաւ ապացուցանելով, որ սուտ են անգլիական լրագիրների հաղորդած տեղեկութիւնները և տաճկահայերի վիճակը հեռու է անմիթար լինելուց, բացէ ի բաց մերժել է: Մենք ցանկանում ենք յուսալ, որ գիտնական ճանապարհորդը, ինչպէս մինչև այժմ, կը շարունակէ հաստատապէս մերժել կառավարութիւնից առաջարկվել անպատասխան պայմանները: Այդ հանգամանքը կը ծառայէր բոլոր եւրոպացիների պատէին, որով թիւրքերի դժբաղդաբար շատ փութերի վրա հիմնված հաւատը, թէ ոչ մի անձ չէ կարող արեւելեան բախշիչ դիւրեւ ձայնի ընդգիծմանը, վերջ ի վերջոյ կը խախտվէ:

Լօնդօնից «Новое Время» լրագիրն հեռագրում են. «Անգլիական հայաստանները պահանջում են մոցնել այն լեհֆօրմները, որ մշակել է ինքն Բ. Գուրը 1879 թ.ին հայ ազգաբնակչութիւն ունեցող երկրներում: Երբ գրական լեզուն, ապա պէտք է ամենայն սրբութեամբ էլ մտեցվի նրա թարգմանութեանը: Թարգմանիչների ազատ պէտք է լինի ամենայն տեսակ կանխակարգ կարծիքներից, փարիսեցութիւնից, մոնեանցութիւնից, հնամուրութիւնից, այլ միայն աշխարհիկ լեզուի սրբագործված օրէնքները պէտք է յարգեն ու նրան միայն հպատակեն:

Մենք այստեղ մասնաւոր կը լինենք այդ օրէնքներից մի քանիսի վրա, մնացածը թողնելով աւելի հմուտներին:

1) Կարելի չէ ժամանակակից լեզուից ոչ առաջ ընկնել և ոչ յետ մնալ:

2) Եթէ ժամանակակից լեզուն երկու և աւելի ճիւղերի է բաժանված, պէտք է գրանցել ընտրել միայն մէկը, և ոչ մի քանիսի խառնուրդը: Կանոնաւոր կենդանի լեզուն հետեւում է միայն մէկ բարբառի քերականութեան և ոչ մի քանիսի միանգամից:

3) Եթէ մի և նոյն ճիւղը իր մէջ ուղղագրական և քերականական հակասական ձևեր ունի, — մէկը գրում է այսպէս, միւսը մի և նոյնը գրում է ուրիշ կերպ, երբ որդը մի այլ կերպ, պէտք է գրանցել ընտրել այն, որ համաձայն է լեզուի զարգացման օրէնքին, ազատ է անհատական քաղաքական և հիմնված է մի և նոյն բարբառի վրա, որի վրա հիմնված է լեզուի ամբողջ քերականութիւնը:

4) Չարգացող լեզուն իր զարգացման ընթացքում բարդից ու բաղադրական դիմում է դէպի պարզը, — գրաբանից դէպի աշխարհիկը: Նոր կաղմակերպվող աշխարհիկ լեզուն ուսմանը և գրաբանի մի խառնուրդ է լինում և շատ ան-

ցող իր փոքր-ասիական նահանգների համար: Ասում են, որ լեհֆօրմների այդ նախագիծը անհետացել է և հնարաւորութիւն չը կայ գտնելու այդ գոյութեամբ:

Լաբուշէր իր «Truth» լրագրում ասում է, որ միմիայն Ռուսաստանը կարող էր բարեբեղ հայերի դրութիւնը, զրաւելով Փոքր-Ասիայի այն գաւառները, ուր միլիոնաւոր քրիստոնեաներ հեծում են թիւրքաց լծի տակ, մինչդեռ մարդասիրութիւնը զոհ է բերվում անգլիական շահերին: Եթէ անգլիացիները չեն համաձայնվի նիւթարկել իրանց շահերը մարդասիրութեան զգացմունքին, այն ժամանակ նրանց բոլոր բողոքները թիւրքաց զազանութիւնների դէմ ուրիշ բան չեն լինի, եթէ ոչ ուղղակի կեղծաւորութիւն:

«Daily Chronicle» լրագիրը պնդում է Մոսկվայի իր թղթակցի խօսքերի վրա հիմնվելով, որ Եւրոպայում ստացված տեղեկութիւնների հիման վրա, Բիթլիսում, Սատուում և Վանում տեղի ունեցած դէպքերը այնքան լուրջ բնաւորութիւն չունեն, ինչպէս հաւատացնում են եւրոպական մի քանի լրագիրները:

Պետերբուրգի «Новости» լրագիրն հաղորդում են Սօֆիայից, որ այս օրերս բոլորները համակրութեան ցոյց արեցին այնտեղ եղող հայերին, թիւրքաց Հայաստանում տեղի ունեցած դէպքերի պատճառով:

ԱՆԿՈՒՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՏԻՆԳ ԼՕՆԴՈՆՈՒՄ

Գեղեցիկների 5-ին Լօնդոնում տեղի ունեցաւ մի բազմամարդ միախնդ, որ կազմվել էր անգլո-հայկական ընկերութիւնը՝ Հայաստանում քրիստոնեաների վերջին կոտորածի դէմ բողոքելու նպատակով: Նախագահում էր համայնքների ժողովի անդամ Ստիվենսոն: Այդ նիստում կարգաւորվեցին Գաղստօնի, կարդիալ Վօգանի և ուրիշ անձանց նամակները: Գաղստօն գրում է.

«Սիրելի Ստիվենսոն, Հայաստանին վերաբերեալ սարսափելի տեղեկութիւնները դրանցից ամբողջ աշխարհի ուշադրութիւնը և ես ի սրտէ ցանկանում եմ ամեն տեսակ աջողութիւն ձեզ և ձեր ցանկութեանը՝ պարզելու ճշմարտութիւնը: Եթէ այդ կոտորածների լուրերը կը ճշդվեն, այն ժամանակ նրանք կը դրեն քաղաքական աշխարհին հարց դարձնելու, թէ մինչև երբ պէտք է շարունակվի մի այդպիսի դրութիւն: Նախօրը չեմ կարող նախադուշակի ընտելեան հետեւանքը, բայց ես համոզված եմ, որ կառավարու-

նեղաշունչի Բայց հետզհետէ ներդաշնակութեան օրէնքը յաղթող է հանդիմանում, վերացնելով թէ խրթին գրաբան բառերն ու ձևերը և թէ աղճատված ուսմականը: Ուրեմն նա դիմում է և աղճատվածից դէպի լրիւր, ազնիւից դէպի գեղեցիկը, անորոշից դէպի որոշը, մասնաւորից դէպի ընդհանուրը, բայց ամենից նշանաւորն այն է, որ երկարից դիմում է դէպի կարճը:

Կան լեզուներ, որոնցում գրում են բարդ և կարգում պարզ, բայց այդպիսիներն էլ մեր ժամանակում աշխատում են վերացնել այդ անյարմարութիւնը: Ուրեմն չը պէտք է ընկնել այնպիսի մոլորութեան մէջ, որից ուրիշները մասամբ ազատվել են և խաղաւ ազատվելու ջանք են գործ դնում: Օրինակներ բերել այստեղ աւելորդ ենք համարում, որովհետեւ ամեն ոք ինքը կարող է բաղմաթիւ օրինակներ բերել մեր ասածը հաստատելու համար:

Ի վերջոյ աւելորդ չէր լինի, եթէ թարգմանիչները, հէնց իրանց մէջ լեզուի միութիւն պահելու համար, նախ և առաջ մի հորանք կաղմէին, թէ ինչպիսի ձևերից պիտի խորշեն և ինչպիսի ձևերի պիտի նախապատուութիւն տան, իսկ այդ հրահանքը հրատարակէին «Արարատի» միջոցով հրապարակական ընդադատութեան կնիքով:

Բնադատութեան բովից անցնելուց յետոյ, նորից կը սրբագրեն և ապա կը սկսեն թարգմանութիւնը, կամ թարգմանածի սրբագրութիւնը, նոյն հրահանգի համաձայն:

Գ. Աղայեան



